

ՊՐՈՑ. ՅԱ. Մ. ԲՐՈՒՍ ԻՆ

ՔԱՂՑԿԵՂԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ



ՅԵՐԵՎԱՆ

Հ Ա Յ Ե Տ Հ Ր Ա Տ

1940

616-006

P-99

29 JUL 2010

ՊՐՈՖ. ՅԱ. Մ. ԲՐՈՒՍԿԻՆ

616-006

P-99 սյ.

ՔԱՂՑԿԵՂԸ

ՅԵՎ. ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ. ԴԵՄ



9/7
02

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԶԱՅՊԵՏԶՐԱՑ
ՅԵՐԵՎԱՆ

1940



1476
40

ПРОФ. Я. М. БРУСКИН
РАК
И БОРЬБА С НИМ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

Ա. Ա. ԶԱԲԱՆ

Պիեր Կյուրիի ռադիում ելեմենտի գյուտի 40-ամյա տարեդարձի, ինչպես և Ռենտգենի ու Նրա անունով կոչվող իրո—ճառագայթների հայտնագործման 40-ամյակի կապակցությամբ, քաղցկեղի դեմ պայքարի Միջազգային լիգան առաջարկել եր 1938 թվի նոյեմբերի 23—ից մինչև 30—ը կազմակերպել միջազգային հակաքաղցկեղային շաբաթ: Միջազգային հակաքաղցկեղային լիգայի կազմի մեջ են մտնում 52 յերկրներ և 92 գիտական կազմակերպություններ, այդ թվում և ԽՍՀՄ-ի գիտական կազմակերպությունները:

Պիեր և Մարիա Կյուրի ամուսինների կողմից 1898 թվի դեկտեմբերին ռադիում ելեմենտի հայտնագործումը և Նրա հատուկ աշխատանքները կոչված ռադիոակտիվ հատկության ուսումնասիրումը պատկանում է համաշխարհային գիտության մեծագույն նվաճումների շարքին: Այդ գյուտը հոկայական նշանակություն ունի վաղ միայն բժշկականության, այլև Ժամանակակից ամբողջ ֆիզիկայի և ընդհանրապես նյութի ուսումնասիրման համար:

Իերմանական նշանավոր ֆիզիկոս Կոնրատ-Վիլհելմ Ռենտգենը (1845—1923) համաշխարհային համբավ ձեռք բերեց կարճ արիքներ ունեցող ճառագայթների գյուտով: Այդ ճառագայթները թափանցողական հոկայական հատկություն ունեն: Ինքը՝ Ռենտգենն իր ամբողջ կյանքի ընթացքում այդ ճառագայթներն անվանում եր X ճառագայթներ: Սակայն, չնայած դրան, նրանց հայտնագործումից շատ շանցած, նրանք ստացան Ռենտգենյան ճառագայթներ անունը: Ռենտգենը մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրեց այդ ճառագայթների հատկությունները և դրանով բժիշկներին հնարավորություն տվեց կիրառելու նրանց զանազան բուժական նպատակների համար:

Մի շարք հիվանդությունների (թոքախտ, վսկորների փառվածք, ստամոքսի, վսկորի քաղցկեղ և այլն) վաղ ախտորոշումը հնարավոր է դարձել միայն Ռենտգենյան ճառագայթների շնորհիվ:

Մակայն այդ ճառագայթները լայնորեն կիրառվում են նաև բուժական նպատակներով:

Որգանիզմի վրա ունեցնող ճառագայթների ունեցած ներգործությունն ուսումնասիրման ընթացքում պարզվել է, վոր տարբեր որգանների և հյուսվածքների բջիջները տարբեր զգայունություն ունեն այդ ճառագայթների նկատմամբ: Հաստատված է նաև, վոր բազմաթիվ շարորակ ուռուցքների բջիջները ունեցնում են ևս ուղիղ ճառագայթների նկատմամբ ավելի մեծ զգայունություն ունեն, քան թե որգանիզմի նորմալ բջիջները: Հենց այս հանգամանքն էլ հիմք է ծառայել, վոր մի շարք հիվանդությունների, առանձնապես շարորակ ուռուցքների բուժման համար լայնորեն ոգտագործվում են ուղիղումը և ունեցնող ճառագայթները:

Մահացություն պատճառների մեջ քաղցկեղային հիվանդությունն ամբողջ աշխարհում գրավում է 3—4-րդ տեղը, նա վնասում է առավելապես միջանոցային և հատկապես մարդկանց: Այստեղից էլ հասկանալի յե հակաքաղցկեղային շարք կազմակերպելու անհրաժեշտությունը:

Կապիտալիստական յերկրներում քաղցկեղի դեմ պայքար է տարվում առավելապես բարեգործական միջոցներով, և անցկացվելիք շարքն այս գործով զբաղվող կազմակերպություններին պետք է ոգնի ամրացնելու իրենց նյութական բազան և ուժեղացնելու իրենց գործունեությունը: Այդ յերկրներում միջոցներ հավաքելը կատարվելու յե կրծքանշաններ, հատուկ փոստանիշեր վաճառելով, մասնավոր նվիրատվություններ ու պետական հատկացումներ ընդունելու ճանապարհով:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, քաղցկեղի դեմ միջոցառումները պետական բնույթ ունեն, և հակաքաղցկեղային հիմնարկներն ամբողջ բուժական-պրոֆիլակտիկ ցանցի մասն են հանդիսանում:

Պրիկլինիկաների, բուժարանների, հիվանդանոցների, կոնսուլտացիաների լայն ցանցը բոլոր կարիք ունցողներին ընդգրկում է անվճար, վորակյալ բուժօգնությունը:

Յերկրում հիմնված է ունեցնող յան հիմնարկների լայն ցանց ու գոյություն ունի 3000-ից ավելի ունեցնող կարիներ, վորտեղ աշխատում են մոտավորապես նույն թվով ունեցնողներ: Մեզ մոտ կան քաղցկեղի դեմ պայքարող 100-ից ավելի հիմնարկներ, այդ թվում՝ միջանի խոշոր գիտահետազոտական ինստիտուտ: Այդ բոլորն ապահովում են հիվանդներին լայն բուժօգնություն, վորը հիմնված է բուժման գիտական մեթոդների և մասնավորապես ունեցողների և ուղիղումի ոգտագործման վրա: Հետաքրքրական է նշել, վոր ունեցնող յան ճառագայթների հայտնագործումից հետո, 20 տարվա

ընթացքում, յերբ այդ ճառագայթները լայն տարածում էին ստացել ամբողջ աշխարհում, ցարական Ռուսաստանը կարողացել էր կազմակերպել ընդամենը 2—3 հարյուր ունեցնող կարիներ և չունեց վոր մի գիտահետազոտական ինստիտուտ: 20 տարվա ընթացքում, խորհրդային իշխանությունը բնակչության անվճար բուժօպասարկման համար հիմնել է 3000-ից ավելի ունեցնող կարիներ և մի քանի տասնյակ ունեցնող գիտահետազոտական ինստիտուտ և քաղցկեղի դեմ պայքարող ինստիտուտներ, այսպես կոչված՝ ունեցողիական ինստիտուտներ:

Հանգստի և 7 ժամյա աշխատանքային որվա իրավունքը, ամեն տարի բանվորներին և ծառայողներին տրվող արձակուրդը, աշխատավորների վճարումով, — աշխատավորների կարիքների համար հատկացվող սանատորիաների, կուրորտների և հանգստի տների լայն ցանցը, անվճար բուժօգնությունը, ապահովագրումը հիվանդության դեպքում և այլն — այս բոլորը հսկայական նշանակություն ունեցող գործոններ են հանդիսանում: Այս բոլորը պահպանում են մեր յերկրի աշխատավորների առողջությունն ու կյանքը և հենց այս էլ շատ կարևոր գործոն է հանդիսանում քաղցկեղ հիվանդությունը կանխելու և բուժելու համար:

Այն հսկայական ուշադրությունը, վոր մեր յերկրում նվիրվում է քաղցկեղի դեմ պայքարի գործին, և այն հսկայական միջոցները, վոր բաց են թողնվում այս նպատակի համար, յերաշխիք են այն բանի, վոր բժշկական աշխատանքների այս դժվարին քնազավառում ևս խորհրդային բժիշկները մոտակա տարիներում կկարողանան հատնել նշանակալից հաջողությունների և խիստ նվազեցնել քաղցկեղով հիվանդացումը և մահացությունն այդ հիվանդությունից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների ընթացքում բժշկական գիտությունը կարողացել է պարզել բազմաթիվ հիվանդությունների առաջացման պատճառները, ուսումնասիրել է հիվանդությունների ընթացքը և մշակել է բուժման ու կանխման հիանալի մեթոդներ:

Խորհրդային բժշկությունը խոշոր նվաճումներ ունի տուբերկուլյոզի, սիֆիլիսի պես հիվանդությունների ձիշա ակտորոշման և նրանց կանխման ու բուժման գործում: Սրա հետևանքով պահպանվում է հազարավոր մարդկանց կյանքը և աշխատունակությունը:

Մեզ մոտ նույնպիսի հաջողությունք պայքար է մղվում սոսմոքոա-աղիքային տրակտի խոցային հիվանդությունների դեմ:

Այսպիսի լավ արդյունքներ ստացվել են շնորհիվ բժշկներին առողջապահության և խորհրդային այլ որգանների ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների համատեղ ջանքերի:

Տուբերկուլյոզի, սիֆիլիսի և ուրիշ հիվանդությունների դեմ մղած պայքարում ձեռք բերած հաջողությունները մեզ լրիվ վստահություն են տալիս, վոր կուսումնասիրվեն ճակ մինչև այժմ քիչ ակտորոշված հիվանդությունների առաջացման պատճառները, և դրա հիման վրա կմշակվեն նրանց կանխման և բուժման ձիշա յեղանակներ:

Մինչև այժմ վոշ բավարար ուսումնասիրված հիվանդությունների թվին են պատկանում և, այսպես կոչված, ուսուցքները:

ԻՆՉ ԲԱՆ ԵՆ ՈՒՌՈՒՑՔՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

Ուսուցքներն իրենցից ներկայացնում են որգանիղմի հյուսվածքների հատուկ, տեսական աճումը: Յերբեմն այսպիսի չափից ավելի աճած հյուսվածքը, կամ ուսուցքն իր կառուցվածքով, վոչնչով չի տարբերվում շրջապատող այն նորմալ հյուսվածքից, վորից և նա առաջացել է: Սակայն հաճախ ուսուցքի հյուսվածքի կառուցվածքը տարբերվում է այն նորմալ հյուսվածքից, վորից նա առաջացել է: Իրենց կառուցվածքով, աճելու բնույթով և շրջապատող հյուս-

վածքների հետ ունեցած առնչութեամբ, սովորաբար ուսուցիչները բաժանվում են յերկու խմբի՝ բարորակ և չարորակ ուսուցիչներ:

Բա բարակուսուցիչներն աճում են դանդաղ, խիստ սահմանազրկվում են շրջապատող հյուսվածքից և հաճախ նույնիսկ ծածկված են լինում հատուկ թաղանթով (կապսուլով): Այս ուսուցիչների բջիջները և մասնիկները չեն պոկվում և ավելի կամ արյան հոսանքով չեն անցնում մարմնի մյուս որգանները և վիրաբուժական հեռացումից հետո սովորաբար նորից չեն աճում: Բարորակ ուսուցիչներն իրենց հյուսվածքի կառուցվածքով վոչնչով չեն տարբերվում այն հյուսվածքից, վոր շրջապատում է նրանց, և վորից նրանք առաջացել են: Այսպիսի ուսուցիչներից են, որինակ, ճարպային հյուսվածքից առաջացած բարորակ ուսուցիչները՝ լիպոմաները, մկանային հյուսվածքից՝ միոմաները, շարակցական հյուսվածքից՝ ֆիբրոմաները և այլն:

Չարորակ ուսուցիչներն, ընդհակառակն, իրենց կառուցվածքի բնույթով խիստ տարբերվում են այն հյուսվածքից, վորից նրանք առաջացել են: Նրանք աճում են շատ արագ, ընդվորում նրանց բջիջներն արմատանում են իրենց շրջապատող հյուսվածքի մեջ: Այդպիսի ուսուցիչներից սովորաբար կարող են պոկվել առանձին բջիջներ ու մասնիկներ և ավելի կամ արյան հոսանքով անցնեն մարդու մարմնի ուրիշ մասերը և որգանները: Այդպիսի տեղափոխումը կոչվում է մետաստազ: Չարորակ ուսուցիչները վիրաբուժական հեռացումից հետո կարող են նորից հայտնվել, կամ, ինչպես ասում են, ուցիդիվ (կրկնում) տալ:

Յերբեմն բարորակ ուսուցիչները կարող են ձեռք բերել չարորակի հատկութուն: Նրանց բջիջներն սկսում են արագ աճել, դուրս են գալիս կապսուլից, արմատանում են շրջապատող հյուսվածքի մեջ և ձեռք են բերում մարմնի ուրիշ մասերը և որգանները տեղափոխվելու հատկութուն, ինչպես և չարորակ ուսուցիչները:

Ուսուցիչների բջիջների այդպիսի տեղափոխումը մարմնի ուրիշ մասերը կամ ուրիշ որգաններն ամենից հաճախ կատարվում է ավշային անոթների և ավելի օակավ՝ արյունատար անոթների միջոցով:

ԻՆՉ ԵՆ ԱՎՇԱՅԻՆ ԱՆՈՒՅՆԵՐՆ ՈՒ ԳԵՂՁԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՑՈՎ ՏԵՂԱՓՈՒՎՈՒՄ ԶԱՐՈՐԱԿ ՈՒՈՒՑՔՆԵՐԻ ԲՁԻՁՆԵՐԸ

Որգանիզմի հյուսվածքների շերտերում—հյուսվածքի բջիջների և թելիկների միջև գոյութուն ունեն ձեղքեր և խողովակներ, վորոնցով շրջանառութուն է կատարում հյուսվածքային հեղուկը՝ ավիշը:

Ավիշը հյուսվածքի բջիջներին տանում է անդադար հյուսվածքի բջիջի բանեցրած նյութերը նույնպես հյուսվածքից անցնում են ավշային հեղուկի հոսանքի մեջ:

Միջհյուսվածքային ձեղքերում սկիզբ են առնում ավշային ժանր անոթներ, վորոնք միանալով կազմում են ավելի խոշոր անոթներ, իսկ ավշային ամենախոշոր անոթը բացվում է յերակի մեջ: Ավշային անոթներն իրար հետ միացած են ավշային (հանդուլցնետով) գեղձերով, վորոնք գտնվում են այդ անոթների ճանապարհին: Այս գեղձերը կարծես թե ֆիլտրում են ավիշը, պահելով իրենց մեջ որգանիզմի համար ֆլատուլար, ոտար մարմինները, ինչպես որինակ՝ բակտերիաները: Յերբեմն բակտերիաները մեծ բազմութեամբ ընկնելով ավշային գեղձերի մեջ՝ առաջացնում են նրանց կարծրացում և մեծացում: Այդպիսի գեղձերը հաճախ շոշափելով կարելի չէ նկատել, որինակ, գեղձախոտով հիվանդ յերիխաների վրի վրա: Բակտերիաները կարող են առաջացնել նաև գեղձերի բորբոքում և թարախակալում:

Թեպետ և ավշային անոթները շատ մանր են, այնուամենայնիվ ուսուցիչներից պոկված բջիջները կարող են ավշային հեղուկի հոսանքով ուսուցիչի սահմաններից դուրս տարվել: Ուսուցիչի բջիջը թափառում է ավշային անոթի մի ճյուղից մյուսը՝ դեպի ավելի խոշորը, մինչև վոր հեղուկը նրան հասցնում է ավշային գեղձերը: Ավշային գեղձերի բարակ անցքեր և խորշեր ունեցող փխրուն հյուսվածքում ուսուցիչի բջիջը կանգ է առնում: Այդպիսով ավշային գեղձերի հյուսվածքը բռնում է ուսուցիչների բջիջները, ինչպես նաև ավշային անոթների մեջ ընկած բակտերիաները:

Այստեղ ուսուցիչի բջիջները կարող են կամ վոչնչանալ, կամ կենդանի մնալ, ամենից հաճախ նրանք օկսում են արագորեն բազմանալ, աճել, և ամբողջ գեղձը վերածվում է նոր, կրկնակի ուսուցիչի:

Այդ ուսուցիչի առանձին բջիջները կարող են անցնել, ուրիշ, ավելի հեռու գտնվող ավշային գեղձերը և տալ դարձյալ նոր ուսուցիչ, և այլն: Յեթև ուսուցիչն աճում է արնատար անոթի մեջ, ապա նրա բջիջները կարող են արյան հոսանքով տեղափոխվել մարմնի ուրիշ որգաններն ու մասերը և այնտեղ տալ դարձյալ նոր ուսուցիչներ:

ԱՐԱԳ ԱՃՈՂ ՈՒՈՒՑՔՆԵՐԻ ԱՂԴԵՑՈՒՅՑՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՁՈՒՅՅԱՆ ՎՐԱ

Բոլոր չարորակ ուսուցիչները և բարորակների դեպի մասը ժառանգի մահացման (քայքայման) հակում ունեն: Այդպիսի քայքայման ժամանակ ստացվում են քիմիական թունավոր նյութեր, վորոնք թունավորում են որգանիզմը:

Սակայն նույնիսկ առանց քայրայտման եւ չարորակ ուռուցքի արագ աճն ուժեղ կերպով մաշում եւ որդանիզմը:

Այս բոլորը ցույց են տալիս, վոր ուռուցքի յերևան գալու գիպքում անհրաժեշտ եւ շատապ կարգով դիմել բժշկին:

ՔԱՂՑԿԵՂԸ, ՅԵՎ ՎՈՐՔԱՆ ՉԱՃԱԻ ԵՆ ՆՐԱՆՈՎ ՇԻՎԱՆԴԱՆՈՒՄ

Հատուկ ուշադրութեամբ պետք եւ դարձնել ուռուցքների տեսակներից մեկի, այսպէս կոչված՝ քաղցկեղային ուռուցքի վրա: Նա պատահում եւ բավականին հաճախ եւ ծանր տառապանքների պատճառ եւ հանդիսանում: Քաղցկեղն արագ աճող չարորակ ուռուցք եւ, վորը ներառում եւ շրջապատող հյուսվածքի մեջ: Քաղցկեղի բջիջները տեղափոխվում են մարմնի ուրիշ որդանները եւ մասերը:

Քաղցկեղը հայտնի յե շատ վաղուց: Քաղցկեղով հիվանդանում են առավելապես միջահասակ եւ մեծահասակ մարդիկ:

Ստատիստիկ հաշիվներով լերկրադնդի վրա ամեն տարի քաղցկեղից մահանում եւ մոտ մեկ միլիոն մարդ:

ԽՍՀՄ-ում ամեն 100 հազար բնակչից քաղցկեղից մահանում եւ 92-ից մին եւ 108 մարդ: Անգլիայում 19.3 թվին 190 հազար բնակչից քաղ կեղից մահացել եւ 153-մարդ, Իսպանիայում՝ 147, իսկ Գերմանիայում՝ 134 մարդ: 30 տարեկանից բարձր հասակի տղամարդկանց քաղցկեղից մահացութեան իր թիվով շատ քչով եւ հետ մնում տուրքերկույոգից առաջացած մահացութեանից, իսկ կանանց մոտ քաղցկեղից մահացութեանն ավելի բարձր եւ, քան մահացութեանը տուրքերկույոգի հետեանքով:

Վերջին տասնամյակի ընթացքում քաղցկեղով հիվանդների թիվը շատացումը բացատրվում եւ նրանով, վոր քաղցկեղի վաղ ախտորոշման համար մշակված են բազմաթիվ յեղանակներ, վորի հետեանքով բարելավվել եւ քաղցկեղով հիվանդների հաշվառումը: Սակայն, դրա հետ միասին հալանորին կա նաև քաղցկեղային հիվանդութեան ընդհանուր քանակի շատացում:

Այս բանը մասամբ հաստատվում եւ գերմանական վիճակագրութեան թվական տվյալներով: Գերմանիայում 1905 թվին քաղցկեղից մահացել են 4333- մարդ, իսկ 1932 թվին՝ 87131 մարդ:

ՔԱՂՑԿԵՂԻ ՆՇԱՆՆԵՐԸ. (ՍԻՄՊՏՈՄՆԵՐԸ)

Ժամանակակից բժշկական գիտութեանը, չնայած դորձադրած մեծ ջանքերին, մինչև ատմ դեռ մինչև վերջ չի լուծել քաղցկեղի

առաջացման պատճառների հիմնական հարցը: Սակայն քաղցկեղի ուռուցման օրինակներն ընթացքում ստացած տվյալներն արդեն շատ բան են բացատրում եւ բժիշկ երի ձեռքն իրական միջոցներ են տալիս այդ ծանր հիվանդութեանը կանխել՝ եւ բուժելու համար:

Սովորաբար քաղցկեղ հիվանդութեան արտաքին արտահայտութեան սկզբնական շրջանում հանդիսանում եւ վոչ-խոշոր, առանց ցավի, կոշտ ուռուցք: Ընթացքն անցնում եւ հարևան առողջ հյուսվածքները, աճում եւ նրանց մեջ եւ աստիճանաբար կորցնում եւ իր շարժունակ թիվը: Վորոշ ժամանակ անց՝ ուռուցքի սոս գտնվող ավշային գեղձերն ուռչում են եւ դառնո մ կոշտ հանգույցներ: Այս առաջանում եւ նրա ց մեջ քաղցկեղային ուռուցքի բջիջներ տեղափոխվելու պատճառով: Անուշադրութեան մասնած դեպքերում արտատար եւ սառնանապես ավշատար ճանապարհներով քաղցկեղի բջիջներն անցնում են լյարդ, թոքերը եւ որդանիզմի ուրիշ հեռավոր տեղերը, վորտեղ սկսում են աճել եւ քայքայել այդ որդանիզմի հյուսվածքը: Հաճախ քաղցկեղային ուռուցքը, առանձնապես լորձաթաղանթների որինակ շրինուքների, լեզվի, քթի լորձաթաղանթի վրա յեղած քաղցկեղային ուռուցքն արագ եւ քայքայվում եւ վերածվում խոցի: Այդ խոցը սակավ ցավ եւ պատճառում, սակայն չի լավանում:

Քաղցկեղային ուռուցքն աստիճանաբար մաշում եւ մարդու որդանիզմը, նրա գործունեութեանն աճող ուռուցքի ազդեցութեան տակ խանգարվում եւ եւ նա համեմատաբար արագորին մահանում եւ:

Բացի ընդհանուր յորնույթներից, հյուսվածից եւ որդանիզմի թուլացումից, այս հիվանդութեան դեպքում առաջանում են մի շարք տեղական հիվանդություններ, վորոնք կախված են քաղցկեղային ուռուցքի գտնված տեղից:

ՔԱՂՑԿԵՂԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ներկայումս քաղցկեղի եւ ուրիշ չարորակ ուռուցքների առաջացման հարցի վերաբերյալ գոյութեանն խոշոր գիտնականների մի քանի կարծիք եւր:

Գերմանական գիտնական Կոնհեյմի կարծիքով ուռուցքները գոյանում են այս սաղմնային բջիջներից, վոր որդանիզմը չի ոգտագործել հյուսվածքներ գոյացնելու համար): Այս սաղմնային մնացորդները մարդկային սաղմի ձևավորման ժամանակ կամ մնում են իրենց տեղում, կամ թե տեղափոխվում են մարմնի զանազան մասերը:

1) Կաթնատուների, այդ թվում նաև մարդու ձուռն բնդմափորվելուց հետո, սկսում եւ արագորին բաժնվել Ձի ներսում, վորոշ ժամանակ անցնելուց հետո գոյանում են բոջները տարեկան իմբեր վորոնցից հետագայում գոյանում են տարբեր որդաններ եւ որդանիզմի համակարգութեաններ (որինակ՝ սաղմնային բջիջները)

Յերկար ժամանակի ընթացքում այդ սաղմի մնացորդները մնում են անզոր զրուխյան մեջ և վոչ մի ձևով չեւեան չեն դալիս: Սակայն այս կամ այն պատճառներից (Չարդվածք, նյութերի փոխանակութեան խանգարում) նրանք սկսում են արագ և անդուսպ աճել, իրարից հեռանում են ու քայքայում հարևան հյուսվածքները և գառնում չարորակ ուռուցքներ:

Կասկած չկա, վոր մի շարք ուռուցքներ, առանձնապես բարորակները և չարորակների մի վորոշ մասը, գոյանում են այդ ճանաչարհով: Սակայն դրա հետ մեկտեղ հաստատապես հայտնի չե՞լ և այն, վոր չարորակ ուռուցքների մեծ մասն առաջանում է նորմալ բջիջներից, վորոնք զանազան պատճառներից ձեռք են բերում անսահմանորեն բազմանալու և աճելու հատկութուն: Թեպետ և այդ գիտնականի կարծիքը շատ արժեքավոր է ուռուցքների առաջացման պատճառների դժվար հարցի լուծման համար, այնուամենայնիվ նա բավարար բացատրութուն չի տալիս ուռուցքները չարորակ աճման պատճառների վերաբերյալ:

Գիտնական Ռիբերտը (1900 թ.) ընդունում է, վոր մի վորեւե տեղում բջիջների յերկարատե, խրոնիկական բորբոքումների ժամանակ խանգարվում է նրանց նորմալ կապը շրջապատող հյուսվածքների հետ: Այդպիսի բջիջները «վայրի» յեն դառնում և սկսում են անսահմանորեն աճել:

Այդ դեպքում չարորակ ուռուցքների զարգացումը կախված է վոչ միայն իրենց բջիջներից, այլև նրանց շրջապատող հյուսվածքների դիմադրողականութեան թուլացումից:

Գիտնականների մի այլ խումբ գտնում է, վոր քաղցկեղի պատճառ հանդիսանում է բակտերիաների և պարազիտների արմատաւնայն որգանիզմի մեջ: Քաղցկեղի հարուցիչ են ընդունելու զանազան բակտերիաներ, սակայն վերջում պարզվել է, վոր բոլոր բակտերիաներն ուռուցքի մեջ գտնվել են վորպես պատահական ներառումներ:

Այնուամենայնիվ անվիճելի չե, վոր բակտերիաները և ուրիշ պարազիտները հաճախ առնչութուն ունեն չարորակ ուռուցքների զարգացման հետ: Այս հաստատվում է գիտնական Ֆրիդբերի վորոճերով: Նրան, վորին հաջողվել է չարորակ ուռուցքներ գոյացնել առնետների ստամոքսում՝ նրանց կերակրելով այլպիսի միջատներով (տարակաւներով), վորոնք վարակված են յեղել հատուկ տեսակի կլոր ճիճուներով: Այդ ուռուցքները փոխանցվում եյին նաև ուրիշ որգան-

մի խմբից զարգանում են ներքին որգանները, մուսներից՝ մաշկը, և այլն): Յերբ խոսում է ավելորդ սաղմնային բջիջների մասին, ապա նկատի յեն առնվում հակապես այդ տարբեր խմբերը, վորոնք չեն ժախտվել սաղմնային հյուսվածքների որգանիզմի կառուցման համար:

ներ: Սակայն յերբ այդ ուռուցքներն ուսումնասիրել են, պարզվել է, վոր վոչ նրանց մեջ և վոչ էլ այդ ուռուցքներից այլ կենդանիներէն պատվաստելիս չեն գտնվել վոչ վորդեր և վոչ էլ նրանց ձվերը: Այս ցույց է տալիս, վոր հետագայում ուռուցքներն աճելու հատկութուն են ձեռք բերել անկախ այն վորդերից, վորոնց պղզեցութեան աակ նրանք առաջացել են:

Վերը խվածից, ինչպես և ուրիշ փաստերից ու տվյալներից յերևում է, վոր բակտերիաները և պարազիտները կարող են մեծ դեր խաղալ չարորակ ուռուցքների զարգացման մեջ, բայց վոչ վորպես ուռուցքների առաջացման անմիջական պատճառ, այլ միայն վորպես մի պայման, վորը ներգործում է որգանիզմի հյուսվածքների վրա:

Գերմանական գիտնական Վիրխովը (1865 թ.) տվել է գողըմման թուրիան: Նա ընդունում է, վոր քաղցկեղը զարգանում է մեր ժարմնի այն մասերում, վորոնք յենթարկվում են զանազան բնույթի յերկարատե գողումների՝ յերմային, քիմիական, մեխանիկական:

Վիրխովը իր ուսմունքը հաստատում է հետեյալ որինականերով: Չարավային Հնդկաստանում և Զոնդյան կղզիներում չափազանց հաճախ է պատահում լեզվի և բերանի խոռոչի քաղցկեղ, վորը հետևանք է այն բանի, վոր այդտեղի բնակիչները, այսպես կոչված «բետել» են ծամում: «Բետելն» արմավից, պղպեղի տերեւից և կրից կազմված խիտ ուժեղ գողող խառնուրդ է:

Այս յերկրում քաղցկեղով բոլոր հիվանդների 70 տոկոսը տաւապում էր լեզվի քաղցկեղով, մինչդեռ մյուս յերկրներում, որինակ՝ Անգլիայում, վորտեղ գոյութուն չունի բետել ծամելու սովորութունը, լեզվի և բերանի խոռոչի քաղցկեղը կազմում է քաղցկեղով բոլոր հիվանդների 5—7 տոկոսը:

Հայտնի չե, վոր Քիչմիրի (Հնդկաստան) բնակիչները ձմռանն իրենց փորը տաքացնելու համար ոգտադործում են թեժ ամխով կրակարան: Սա բավականին հաճախ առաջացնում է մաշկի քաղցկեղ՝ վորովայնի վրա, ըստ յերևութին հաճախ կրկնվող այլվածքներէ հետևանքով:

Քաղցկեղ կարող է առաջանալ և խրոնիկական բորբոքման պրոցեսների ժամանակ հյուսվածքների յերկարատե ու կրկնվող գողումից հետո, որինակ՝ վենաների լայնացման հետևանքով առաջացած խոցերից, հին սպիւների շրջանում, վորոնք՝ գոյացել են այլվածքներից և հին Ֆիստուլներից հետո, ինչպես նաև մաշկի կրկնվող յերկարատե գողման հետևանքով:

Քաղցկեղի առաջացման մեջ մեծ դեր են խաղում մի շարք

նյութեր, վորոնք պողապանում են մաշկի և ուրիշ որգանների մշտա-
կան գոգոտմ:

Որինակ՝ ալիոհոլիկների մոտ ստամոքսի և աղիքների քաղցկեղը
պատահում է հաճախ. քան ուրիշ մարդկանց մոտ: Սա բացատրվում
է նրանով, վոր ալիոհոլի մշտական գոլծածությունն անբարենպաստ
է ներգործում ստամոքսա-աղիքային լորձաթաղանթի վրա: Ապացուց-
ված է նույնպես ծխելու դեբը քաղցկեղի զարգացման մեջ: Որինակ՝
բերանի խոռոչի քաղցկեղն ավելի հաճախ պատահում է ծխողների
մոտ, քան չծխողների:

Քաղցկեղի առաջացման տեսակետից շատ հետաքրքրական է
այսպես կոչված պրոֆեսիոնալ քաղցկեղը, վոր հաճախ պատահում է
այն անձանց մոտ, վորոնք աշխատում են ձյութի և կուպրի թոր-
ման արտադրություններում, գազի գործարաններում և այն ար-
տադրություններում, վորտեղ աշխատանքը կապված է հանքային
յուղի գործածության հետ:

Վաղուց հայտնի յն ծխնելուց մաքրողների ծվապարկը (փոշաբլ),
քաղցկեղով հիվանդանալու վառտը: Ինչպես յերևում է, վոչ միայն
ձյութի, այլև վառարանի մրի յերկարատև քիմիական ներգործու-
թյունը քաղցկեղով հիվանդանալու պատճառ է ծառայում:

Անլլխայում 1920 թվից մինչև 1928 թվը հաշվի յե առնված
յեղել յաղցկեղային հիվանդությունների 510 դեպք, վորոնք յեղել են
այն սրտադրություններում, ուր աշխատանքը կապված է յեղել քա-
րածիային խեօի թորման հետ (ձյութ, կուպր կրիոզոդ, աստրացեն
ստասալիտ) և քաղցկեղային հիվանդության 533 դեպք այն արտա-
գրություններում, վորտեղ աշխատանքը կապված է յեղել հանքային
յուղ (հերձաքարի յոդ) գործադրելու հետ:

Բավական հաճախ պատահում է պրոֆեսիոնալ քաղցկեղ այն
բանվորների մոտ, վորոնք յենթարկվում են զանազան տեսակի
ճառագայթային եւերգիայի ներգործության, որինակ, ռադիոակտիվ
հանքերը մշակելիս և այլն:

Լայնորեն հայտնի յե թոքերի քաղցկեղի հաճախակի առաջացումը
Չեխոսլովակիայում, այն հանրափորների մոտ, վորոնք հանքաքար
են հանում ռադիում ելեմենտն ստանալու համար:

Այս հիվանդացումներն անմիջականորեն կապված են այն ան-
հոգության հետ, վոր կապիտալիստական յերկրներում ցու արեբում
են արդյունարերոցները, աշխատանքի պայմանների միջոցների բա-
րելավման նկատմամբ, ինչպես որինակ՝ մեխանիզմների կա ուցվածքի
լավագումը՝ գոյոոց խառնուրդների գայտումը պակասեցնելու համար
ողափոխության լավացումը՝ ողը կուպրային գազերից և ռադիոակ-
տիվ հանքերի փոշուց մաքրելու համար, Աշխատանքային որվա յեր-

կարատեթյունը պակասեցնում է բանվորների ուղադրությունը և
զգուշությունը, մեծացնում է որգանիզմի հյուսվածքների քիմիական
և ճառագայթային գոգոման վնասակարությունը:

Ռենտգենի և ռադիումի ճառագայթների լայն ոգտապործման կա-
պակցությամբ սկզբնական շրջանում նկատվում էր ռենտգենյան և
ռադիումային կարինեոնների բժշկական պերտոնալի քաղցկեղով հի-
վանդանալը, քանի վոր այն ժամանակ զեռ ևս այս ճառագայթների
հատկությունները լավ ուսումնասիրված չէին: Նեկայումս, յերբ
այդ ճառագայթները և նրանց ազդեցությունը կենդանի որգանիզմի
վրա ուսումնասիրված էն բավականաչափ լավ և միջոցներ են մշակ-
ված նրանց վնասակար ազդեցությունից պաշտպանվելու համար,
բժշկական պերտոնալի համար քաղցկեղով հիվանդանալը հազվադեպ է:

1913 թվին ճապոնական գիտնական Իմադավայ և ուրիշները,
ուսումնասիրելով պրոֆեսիոնալ քաղցկեղի առաջացումն այն բանվոր-
ների մոտ, վորոնց աշխատանքը կապված է քայածուխ թորելու
հետ, փորձեր կատարե ին կենդանիների վրա՝ ճապարի մաշկին տե-
վականորեն կուպր քոնով Այդ կե դա ին է մեծ մասն ստացավ
քաղցկեղային ուսուցք: Հետագայում քաղցկեղային ուսուցքի զար-
գացում ստացվել է վոչ միայն յե կար ժամանակ մաշկին կուպր
քոնով, այլև կուպրն որգանիզմի սեջ մացնելով:

Այդպիսի ներգործությամբ, ինչպես ցույց են տվել հետագա հե-
տադոտությունները, ոտոված է վոչ միայն քարածխային կուպրը,
այլև մկնդեղն ու մի շարք ուրիշ նյութեր:

Վերջին տարիներում անգ իական գիտնականները լարորատոր
յեղանակով քարածխից պատրաստել են այնպիսի քիմիական նյու-
թեր, վորոնք կենդանիներին սրսկելիս նրանց վրա առաջացնում են
ինչպես բարորակ, այնպես էլ չարոակ ուսուցքներ: Ուսուցքների
առաջացման պատճառները հասկանալու համար չափազանց հետա-
քըլքիր է այն փաստը, վոր այս ն ութերն իրենց քիմիական բազա-
դրությամբ չափազանց մոտ են այսպես կոչված հորմոններին¹⁾

Իսկ ինչ բան են հորմոնները:

ՆԵՂԻՆ ՍԵՐԵՑԻԱՅԻ ԳԵՂՁԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՐՄՈՆՆԵՐԸ

Մարդու և կենդանիների որգանիզմում գոյություն ունեն այնպիսի
զեղձեր, վորոնք ոտոված են մի շարք նյութերի (սեկրետների) արտոգրե-
լու հատկությամբ: Այդ արտոգրած նյութերը գորտ են գալիս հա-
տուեկ արտածեբաններով (թրագեղձեր, յենթաստամոքսային գեղձ և
այլն): Այս գեղձերի կողքին գոյություն ունեն և այնպիսի գեղձեր,
վորոնք չունեն յեղքի ծորաններ: Այս գեղձերի սեկրետները, կամ,
1) Հորմոն խոսքը Հունարեն է, նշանակում է գուրոզ, շարժող:

այլ կերպ՝ արտադրանքը, վոր նրանք արտադրում են, անցնում են անմիջապես արշաւ մեջ: Ի հակադրութեան այն գեղձերի, վորոնք օւնեն յելքի ծորաններ և այդ պատճառով ել կոչվում են արտաքին սեկրեցիայի գեղձեր, այս վելջին տեսակի գեղձերը չունեն յելքի ծորաններ և կոչվում են ներքին սեկրեցիայի գեղձեր:

Այս գեղձերից որգանիզմի կյանքի համար չափազանց մեծ դեր է խաղում վահանագեղձը:

Ներքին սեկրեցիայի գեղձերի սեկրետների ազդեցութեանն արգանիզմի աշխատանքի վրա շատ մեծ է: Իրան որինսկ կարող է ծառայել վահանագեղձը. նա գտնվում է շնչափողի առջևում և արտադրում է սի հորմոն, վորը չափազանց կարևոր է որգանիզմի կյանքի և նորմալ զաւ գացման համար:

Յեթե մանուկ հասակում վահանագեղձը հիվանդանում է և նրա ազդեցութեանը խիստ ընկնում է, ապա այդպիսի յերիխանների ֆիզիկական ու մտավոր զարգացումը կանգ է առնում: Նրանք զառնում են կրետիններ (ապոլշներ): Կրետիններին կենդանու վահանագեղձի պրեպարատներով կերակրելիս կարելի յէ վերացնել կրետինիզմի մի շարք հիվանդագին յերևութիւներ, վորովհետև կրետինները վահանաձև գեղձի հետ միաւին ստանում են որգանիզմի համար անհրաժեշտ հորմոնը:

Մյուս կողմից՝ սեկրետների չափազանց շատ արտադրումը ևս առաջ հետևանքի չի մնում որգանիզմի համար: Գոյւթյուն ունի նոյն վահանագեղձի այնպիսի հիվանդութեան, վորին հետևում է հորմոնի յափից ավելի արտադրումը, և սատանում է գեպի մի շարք կենսական պրոցեսների խանգարում, վորոնք առաջանում են ներվալին համակարգութեան ավելորդ գոգուման հետևանքով:

Ներքին սեկրեցիայի գեղձերի շարքին են պատկանում սեռական գեղձերը, մակերիկամային գեղձը և բազմաթիվ ուրիշ գեղձեր: Որգանիզմի լիա ժեք գործունեցութեանը հնարավոր է միայն ներքին սեկրեցիայի բոլոր գեղձերի նորմալ աշխատանքի գեպքում:

Քաղցկեղի առաջացման պատճառները հասկանալու համար բացառիկ չափով կարևոր է այն փաստը, վոր քարածխային ձյութից ստացված այն հատուկ քիմիական նյութերը, վորոնց մասին խոսվել է վերևում, վոչ միայն քիմիական կառուցվածքով են նման հորմոններին, այլև հատուկ ներգործութեամբ, վորը յերբեմն լինում է ավելի ուժեղ, քան ներքին սեկրեցիայի գեղձերի բնական հորմոններինը:

Այսպիսով նորագույն գիտական փաստերը ցույց են տալիս, վոր վոչ միայն արտաքին պատճառները՝ քարածխային կուպրը, կամ ձյութը և այլն կարող են մեծ դեր խաղալ ուռուցքների գոյացման մեջ, այլև, ներքին պատճառները՝ որգանիզմում քիմիական պրոցես-

ների խանգարումները կարող են ուռուցքների զարգացման պատճառ հանդիսանալ:

Նորմալ բջիջներում միանգամից չարորակ ուռուցք չի առաջանում: Նա գոյատևում է բջիջների վրա ամենաբազմազան պատճառների յերկարատև ազդեցութեանների հետևանքով: Այս պատճառների մ ջ շատ խոշոր դ ր են խաղում բորբոքային պրոցեսները:

Վերևում բերված ցուրդ գիտական յենթադրութեանները ցույց են տալիս քաղցկեղի առաջացման այս կապ այն պայմանները: Սակայն նրանք չեն բացատրում գլխավորը՝ թե ինչու չարորակ ուռուցքների բջիջներն անսահման աճելու և բազմանա ու հատկութեան ունեն:

Չնայած դրան, այժմ արդեն կարելի յէ հարատապեթ ասել, վոր չարորակ ուռուցքների առաջացումը կախված է ամենաբազմազան պատճառներից, վորոնք տեղական և ընդհանուր ներգործութեան են ունենում որգանիզմի վրա: Անվիճելիորեն հաստատված է, վոր Եւոթ ցքի բջիջներն որգանիզմի համար ոտար չեն, այլ առաջանում են հենց այդ որգանիզմի նախկին նորմալ բջիջներից, վորոնք զանազան պատճառների ազդեցոթ ան տակ չարորակ աճի հատկութեան են ձեռք բերում: Այս պատճառներն առաջացնում են վոչ միայն տեղական վոլուում, այլև, ընդհանուր ազդեցութեան են ունենում որգանիզմի վրա, խոր փոփոխութեաններ են առաջացնում նրա նյութերի փոփոխականութեան մեջ:

946
945

ՆԱԽԱԲԱՂՑԿԵՂԱՅԻՆ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայումս հայտնի յեն մի շարք հիվանդութեաններ, վորոնք նախատրամադրում են քաղցկեղի զարգացմանը:

Այս նախաքաղցկեղային հիվանդութեանների մեջ առանձնապես խոշոր տեղ են գրավում խրոնիկական բորբոքային պրոցեսները: Սրանց շարքին են պատկանում արգանդի և ուրիշ որգանների լորձաթաղանթների բորբոքային փոփոխութեանները:

Ստամոքսի խրոնիկական հիվանդութեան, նրա կատարելի, ժամանակ, առանձնապես հասակավոր մարդկանց մոտ, հաճախ նկատվում է լորձաթաղանթի գերաճում: Այս գերաճումը հասակավոր տարիքում կարող է քաղցկեղի զարգացման աղբյուր դառնալ:

Բերանի խոռոչի, լեզվի խոցերը, վորոնք առաջանում են Եուր, չանգոտող ատամների կամ պրոտեզների (արհեստական ատամների) շնորհիվ, նույնպես կարող են նպաստել քաղցկեղի զարգացմանը: Այլ վածքների հետևանքով առաջացած վորկորի լորձաթաղանթի խոցումներն ու սպիւնըը նույնպես նպաստում են կերակրափոշի քաղցկեղի զարգացմանը:



Մաշկի ու պիւնները, սիստեմատիկորին յենթափոխարկով շփման և քոզման, կնո՞ կրծքագեղձերի կարծրացումը խրոնիկական բորսոքային պրոցեսների հստեանքով, նույնպես կարող են այդ տեղերում առաջացնել քաղցկեղի յին պրոցես:

Այս հիվանդութուններին պետք է յորջ ուշադրութիւն դարձնել, քանի վոր նրանք շատ անգամ քաղցկեղի զարգացման աղբյուր են ծառայում: Այսպիսի հիվանդութիւնների բուժումը պետք է լինի շատ խնամքով: Այս հիվանդութիւնների լրիվ բուժումը կանխում է նրանց չարորակ ուռուցք դառնալու հնարավորութիւնը:

ՔԱՂՑԿԵՂԱՅԻՆ ՈՒՌՈՒՑՔՆԵՐԻ ՎԱՂ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՑՈՒՆԸ

Քաղցկեղն իր զարգացման օկզբում ունի տեղական հիվանդութեան բնույթ: Համապատասխան բուժման դեպքում այդ հիվանդութիւնը շատ դժուարութեամբ կարող է վերացվել:

Վաղ ակտորոշումը (պիստոզ) քաղցկեղի բուժման պարտաւորութիւն է: Վաղ ակտորոշումը (պիստոզ) քաղցկեղի (արգանդի, կրծքագեղձի, մաշկի, լեզվի և այլն) վաղ բուժումը կարող է մարդուն փրկել մահից:

Քաղցկեղի վաղ ակտորոշման կարևոր միջոցներից մեկը հանդիսանում է այնպես կոչված բիոպսիան, այսինքն՝ կապիտալի քաղցկեղային ուռուցքից կտրած կտորի հետազոտումը միկրոսկոպի տակ: Ներկայումս այս մեթոդը լայնորէ կիրառվում է և կարողանում է մեզ պատկերացում տալ բիոպսիաներում տեղի ունեցող չարորակ փոփոխութիւնների մասին այն ժամանակ, յերբ քաղցկեղի ուրիշ նշանները դեռևս բավական սշտի պարզ և վերոշակի չեն:

ՔԱՂՑԿԵՂԸ ՎԱՐԱԿԻՉ ԶԵ


Մինչև այժմ հայտնի չի քաղցկեղով վարակվելու վոչ մի դեպք: Չնայած այն բանին, վոր քաղցկեղը հետազոտութեամբ ու պերացիայի ժամանակ հաճախ է պատահում, վոր վիրաբուժաները վիրավորում են իրենց ձեռքերը, վորպիսի հանգամանքը կարող է վարակման աղբյուր ծառայել, այնուամենայնիվ վարակման վոչ մի դեպք չի նկարագրված: Քաղցկեղով հիվանդներին խնամող հիվանդանոցային պերտանալը շատ ավելի հազվադեպ է հիվանդանոցում, քան ուրիշ պրոֆեսիայի մարդիկ: Քաղցկեղով հիվանդ տղամարդու կամ կնոջ սեռական որգանների վարակման ստույգ դեպքեր ևս չեն պատահել:

Այս բոլորն ապացուցում են, վոր քաղցկեղը վարակիչ չէ և քաղցկեղով հիվանդին խնամելը վոչ մի վտանգ չի ներկայացնում:

առաջին հասկանալի յե, վոր խնամքի ժամանակ անհրաժեշտ է պահպանել առողջապահական ընդհանուր կանոնները:

ԱՌԱՆՁԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՔԱՂՑԵՂԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒՅՑՈՒՆԸ

1. ՍՍՐԻԿ ԵՐՐՈՒՆԻ ԲԱՊՑԿԵՂԸ առավելապես պատահում է տղամարդկանց մոտ: Նա սկսվում է ստորին շրթուների վրա վոչ մեծ, համառորինչ ավալցող ճաքվածքից կամ խոցիկից: Այդ խոցիկը ծածկված է կեղևով, վորը հիվանդները պարբարաբար պոկում են: Սոցը մեծանում է և անոշադրութեամբ մասնավելու դեպքում տարածվում է ընդերի ու բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա: Յնթաժնոտի շրջանում և վզի վրա համեմատաբար վաղ հայտնվում են խոշոր, պինդ հանգուլցներ, վորոնք վկայում են ուռուցքի տեղափոխումն ավալցիւն գեղձերի մեջ:



Վերահատուժի, առաջ
Նկ. 1. ՍՍՐԻԿ ԵՐՐՈՒՆԻ ԲԱՊՑԿԵՂԸ
Վերահատուժից հետո

Հասակավոր, մարդկանց, առանձնապես ծխամորձ ծխողների մոտ, շրթուների շրջանում ամեն անգամ խոցեր կամ ճաքվածք:


ներ յերևալու դեպքում անհրաժեշտ ոճանկիքներով և ամեն տեսակի տնային միջոցներով բուժելու փոխարեն անմիջապես դիմել բժշկի:

Հիվանդութեան բուժումը վաղ շրջանում տալիս ե 80—90 տոկոսով առողջացում:

2. Բերանի լորձաթաղանթի քաղցկեղն սկզբնական շրջանում շատ հաճախ յերևան ե պալիս վոչ մեծ խոցի ձևով: Հաճախ խոցն առաջանում ե լրձաթաղանթը սուր ատամների, արհեստական ատամների, կոշտ կերակրի կտորի և այլնի վիրավորումից հետո: Բեկանի խոռոչի խոցերը, վորոնք 3—4 շաբաթվա ընթացքում չեն լավանում, կասկածելի յեն, չնայած այն բանին, վոր նրանք գրեթե չեն առաջացնում վոչ մի խանդարում:

3. Լեզվի քաղցկեղի ժամանակ հիվանդութեանն սկսվում ե վոչ մեծ խոցից, վորը լավանալու վոչ մի հակում չունի:

Այդ խոցիկի յեղբերն արագորեն կոշտանում են և ուռուցքը տարածվում ե լեզվի մակերեսով: Հաճախ այդ խոցիկը հայտն լում ե լեզուն սուր ատամների ծայրերով վիրավորելուց հետո, կամ պրոտեզներով վրասելու դեպքում:



Մինչև բուժումը
 և. 2. Քրի քաղցկեղ
 Բուժումից հետո

4. Քրի յեվ քրժմպանի քաղցկեղը.—Ուռուցքի սկզբնական շրջանը բնորոշ ե նրանով: վոր քթի խոռոչի մեկ կամ յրկու կողմերի նեղացման հետևանքով քթով շնչելը խանգարվում ե, ինչպես և քայ-

քայվոյ ուռուցքից հաճախակի և առատ արյուն ե հոսում: Ըմպանի և հետրմպանային տարածութեան քաղցկեղի ժամանակ սովորաբար կոշտ կերակուր ուտելը դժվարացնում ե կուլ տալիս ցավեր են զգացվում:

5. Կոկորդի քաղցկեղը.—Այս հիվանդութեան ժամանակ առաջ ե գալիս կայուն խոպոտութեան, իսկ ուռուցքը բավականաչափ աճելիս կարող ե առաջանալ շնչառութեան դժվարացում: Ճիշտ դիագնոզը հաստատելու համար շուտ բժշկին դիմելն այս դեպքում ևս չափազանց կարևոր ե, քանի վոր իր ժամանակին կատարած վիրաբուժական միջամտութեանը, կամ սննտոցնայն և ռադիումի բուժումը հիվանդին կարող ե փրկել այս վտանգավոր հիվանդութեանից:

6. Վոսկորի քաղցկեղն սկսվում ե կերակուրը կուլ տալու դժվարեցումով վորկորի անցքն ուռուցքից նեղանալու հետևանքով: Քաղցկեղի ժամանակ վորկորի անցքի նեղացումը կարող ե այնքան շատ լինել, վոր կերակրի սովորական ընդունումն անհնարին կդառնա: Այդ ժամանակ օտիւլված են լինում հիվանդի ստամոքսի վրա կատարել վոչ մեծ ոպերացիա, այսինքն բաց են անում ստամոքսի անցքը (գասարոտոմիա), վորի մեջ տեղավորում են մի խողովակ՝ հիվանդին արհեստականորեն կերակրելու համար:

7. Սաւոնսի քաղցկեղը տղամարդկանց մոտ պատահող քաղցկեղի ամենահաճախակի տեսակն ե: Ստամոքսի քաղցկեղի նշաններն սկզբնական շրջանում միշտ չեն, վոր բավականաչափ պարզ են: Մեծ մասամբ նա, արտահայտվում ե ցավերով քրտազգալի շրջանում, ախորժակի բացակայութեամբ, մսի նկատմամբ զզվանք զգալով, սրտախառնութեամբ, իսկ հաճախ՝ փխուժումով: Արդեն սկզբնական շրջանում իր վրա ուշադրութեան ե գրավում հիվանդի արագ նիհարումը, ուժերի անկումը և մաշկի գունատումը՝ արյան պակասութեան ուժեղացման հետևանքով: Այս բոլոր նշանները 30—40 տարեկանից բարձր հասակի մարդկանց մոտ պետք ե կասկած առաջացնեն ստամոքսի քաղցկեղի տեսակետից, և հիվանդը պետք ե խրնամքով հետազոտվի: Հաճախ բոլոր հետազոտութեանները տալիս են վոչ բավարար պարզ ավյաններ, և դիագնոզը ճիշտ վորոշելու համար պետք ե դիմել վորոժայնահատման ոպերացիային (փորձնական լապարոտոմիա): Քաղցկեղի առկայութեան դեպքում կատարում են ստամոքսի համապատասխան մասը հեռացնելու ոպերացիա, իսկ յիժե ստամոքսն առողջ ե, վորոժայնային խոռոչը փակում են: Քաղցկեղային ուռուցքի հեռացումը (առանձնապես վաղ շրջանում) շատ դեպքերում տալիս ե առողջացում:

8. Ուղիղ աղիքի քաղցկեղ.—Սա պատահում ե նույնպես հաճախ բնորոշ նշաններն են համառ փորկապութեանները, վոր պարբերաբար


փոխվում են լուծի՝ արյունային կամ սև կղզղանքով: Հի անդուլթյան վաղ շրջաններում խրոլուրդիական միջամտությունը կարող է վերացնել հիվանդությունը և տալ կայուն առողջացում: Հաճախ այդպիսի հիվանդները բուժվում են իբր թե գոյությունն ունեցող գեմորոյից և արդեն անուշադրության մասնած, յերբեմն անբուժելի գրությամբ միայն ընկնում են մասնագետ բժշկի մոտ:

9. Կրծագեղձի քաղցկեղը.— Սովորաբար հիվանդության սկզբում գեղձի խոլում նկատում ենք կոշտ, անցավ հանույց: Հանգույցը հայտարարվում է պատահաբար՝ լողանալիս, հագնվելիս և այլն: Կոշտ, անհարթ ուռուցքն ունի արագ աճելու հակում: Կարճ ժամամանակից հետո նա վոչ միայն մեծանում է, այլև համակցվում է իրեն սահմանակից աշկի հետ և հաճախ առաջացնում է պտուկի ներձկույթ: Այդ ժամանակ անուլթում հայտնվում են աուր, կոշտ հանգույցներ: Վորոնք վկայում են, թե ուռուցքի բջիջները տեղափոխվել են ավազյին գեղձերի մեջ: Չարորակ ուռուցքի հայտնվելը և հետագա զարգացումը սովորաբար ընթանում է անհիվանդագիտն: Կրծքագեղձի բաղկացիլ հետաման ուղեբացիան, վաղ շրջաններում ունեցողները և ուղեբուժի հետագա բուժումով, տալիս է հիանալի արդյունքներ:

Կան մի շարք հիվանդություններ, վորոնք կարող են նպաստել քաղցկեղի գալստանք: Այդպիսիներից մեկը, վոր արժանի յե ուշագրության, կրծքագեղձի բորբոքումն է, վորն ունի փափուկ, չաճող ուռուցքի հատկություն և կազմված է լինում մանր հանուլթներից: այդպիսի բորբոքմանն յերբեմն հետևում է արյունահոսությունը պտուկից:

10. Արգանգի քաղցկեղը քաղցկեղի ամենահաճախակի տեսակն է կանանց մոտ: Յուրաքանչյուր կին 30 տարեկանից բարձր հասակում պետք է կանոնավոր կերպով այցելի կանանց հիվանդությունների բժշկին, մանավանդ այն դեպքում, յերբ նրա մոտ յերևան է գալիս արյունահոսություն սեռական որգաններից: Վոչ պակաս կասկածելի յե կնոջ մոտ արյունահոսության հայտնվելը սեռական հարաբերություններից հետո, նույնպես և արյունահոսությունը տարիքավոր կանանց դաշտանադարային (կլիմակտերիկ) շրջանում, յերբ կնոջ դաշտանը դադարել է, և վերջապես առաջին բնույթի կրող զարշահոտ արտադատուկի հայտնվելը: Յեթե այս նշաններից մեկը, գրեթե մեկը կա, անհրաժեշտ է պարզել նրա պատճառը, վորովհետև դրանք հաճախ հանդիսանում են քաղցկեղային պրոցեսի հետևանքը: Յերբեմն միայն ճիշտով և հայելիով հետազոտությունը բավարարող լինելը չի տալիս ճիշտ դիագնոզը հաստատելու համար: Այդ դեպքում հարկ է լինում կարել արգանքի պարանոցի ուռուցքի տեսակետից կասկածելի հյուսվածքից

մի կտոր, կամ կատարել աուպես կոչված, փորձնական քերում՝ հիվանդի թյաս ճիշտ դիագնոզը հաստատելու համար:



Նկ. 3 Կրծագեղձի քաղցկեղ

Արգանգի քաղցկեղի բուժման ժամանակակից մեթոդները շատ բավարդյունքներ են տալիս: Բազմաթիվ կանաք, շնորհիվ բուժման, փրկվել են մահանալուց, շատերը նրա ղից յրկար տարիներ են ինչ միևնազան առողջ են, յերեխաներ ունեն և աշխատում են:


11. Մաշկի քաղցկեղը.— Մաշկից ներկայա նում է քաղցկեղի համեմատաբար բարենպաստ տեսակը: Հաճախ մաշկի քաղցկեղը պատահում է տարբեր ծագում ունեցող հիվանդների տեղերում, վորոնցից են այրվածքներից հետո գոյացած սպիները: Նախկինում յեղած մաշկի տուբերկուլյոզի (գալուլի) սպիները և այլն: Մաշկի քաղցկեղն իր ժամանակին բուժելիս տալիս է հիանալի արդյունքներ:

ՔԱՂՑԿԵՂՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԱԼԸ ԿԱՆԻԵԼԸ

Քաղցկեղով հիվանդին բուժելիս անհրաժեշտ է հիվանդի որգանից մի րոգհանուր ամրացում, որգանից մի դիմադրողականության բարձրացման և տեղական ներդրություն քաղցկեղային ուռուցքի վրա:

Ժամանակակից բժշկությունը քաղցկեղի բուժելու հղոր մեթոդներ— ունի (ուսագիտական ճառագայթներ, ռադիում, և սղերացիոն միջամտություն): Այս բոլոր մեթոդները հիվանդության

վազ շրջանում ապրիս են առողջացման մեծ ասիոս՝ քաղցկեղի տե-
 անկների մեծամասնության դեպքում¹⁾



Գնդի տողջ
 որդաններ

Արգանդի անաշարության
 մասնված քաղցկեղ

Նկ. 4. Արգանդի քաղցկեղ

Քաղցկեղային հիվանդության առաջացմանն ամենից շատ նպաս-
 տող պայմաններից մեկը հանդիսանում է ծերությունը և որդանիզմի
 վաղաժամ մաշումը: Մարդու մոտ վորքան վաղ են սկսում յերևան
 գալ ծերության նշանները, վորքան շուտ է նրա որդանիզմը մաշ-
 վում, այնքան վաղ կարող է յերևան գալ՝ քաղցկեղով հիվանդանա-
 լու նախատրամադրվածություն:

Այստեղից էլ պարզ է, վոր քաղցկեղից նախազգուշացնելու ա-
 մենալավ միջոցը որդանիզմի ֆիզիկական ու մտավոր ուժերի պահ-
 պանման և զարգացման մասին հոգալն է: Այդ ամենից լավ ճանք է
 բերվում ճիշտ, նորմալ կյանք վարելով, աշխատանքի և հանգստի
 ճիշտ բեժիմով: Միտեմատիկորեն ֆիզիկուլտուրայով զբաղվելով և մի
 շարք ֆրասակար սովորություններից հրաժարվելով:

Արևստի գործածությունը վոչ միայն քայքայում է ամբողջ
 որդանիզմը՝ առաջացնելով վաղաժամ ծերություն, այլև բարձրաց-
 նում է նախատրամադրությունը ստամոքսի քաղցկեղի նկատմամբ:

¹⁾ Բժշկականության այն հիմնական կանոնը, թե հիվանդությունը կանխելն ավելի
 հեշտ է, քան բուժելը, լիովին վերաբերում է նաև քաղցկեղին:

Ծխելը վոչ միայն անբարենպաստ է ազդում սրտանոթա-
 յին և որդանիզմի ուրիշ համակարգությունների վրա, այլև, ինչպես
 տեսանք, նպաստում է ստորին շրթունքի, լեզվի, բերանի խոռոչի
 քաղցկեղով հիվանդանալուն:



Նկ. 5. Մաւկի քաղցկեղ

Վոչ պակաս նշանակություն ունի սնվելու վոչ ճիշտ բեժիմը,
 առանձնապես չափից ավելի բնուէրը՝ շատ ուտելը, վոր նպաստում է
 միայն նյութերի փոխանակության խանգարմանը, այլև ստամոքսի
 և աղիքների խրոնիկական հիվանդությունների առաջ գնալուն:
 Կյանքը նստած անցկացնելը, վորին ուղեկցում է փորկապությունը
 և կանգն ուղիղ ու հաստ աղիքներում, առաջացնում է ամբողջ որ-
 դանիզմի թունավորում՝ աղիքներում յեղած պարունակության քայ-
 քայման և նեխման հետևանքով, և սա նույնպես նպաստում է հիվան-
 դանալուն:

Կյանքի ճիշտ, նորմալ յեղանակը, ֆիզիկուլտուրայով պարագելը,
 աշխատանքի և հանգստի ճիշտ դասավորումը, չափավորությունն ու-

տելու մեջ, կենցաղային վատ սովորութիւններէն՝ ալկոհոլից և ծխախոտից հրաժարուիլ՝ պահպանում են առողջութիւնը, արիւթիւնը, յերիաստարդութիւնը և զբա հեա միասին հանդիսանում են քաղց-կեղային հիվանդութիւննից նախազգուշանալու ամենակարևոր գոր-ծոններէն մեկը:

Հատուկ ուշադրութեան են արժանի ճիշտ և առողջ սնման խըն-դիւրը, վորովհետև կասկածից դուրս է, վոր սնման խանգարման աղ-բքուր են հանդիսանում ստամոքսի և աղիքների կատարով ախտաբան հաճախակի հիվանդանալը, վորը ստամոքս-աղիքային տրակտին նախատրամադրում է քաղցկեղով հիվանդանալու:

Կերակուրը և թեյը տաք վիճակում ընդունելու խիստ տարած-ված սովորութիւնը ֆլասակար է, քանի վոր տաք կերակուրն առա-ջացնում է վոչ միայն բերանի, այլև կերակրափողի լորձաթա-ղանթի այրվածքներ:

Քաղցկեղ առաջացնող պրոֆեսիոնալ ֆլասակարութիւնները վե-րացնելու համար ներկայումս կան նախապաշտպանման շատ իրական մեթոդներ: Անհրաժեշտ է արտահազուստ (ռետինե հագուստ, ձեռնոցներ և հատուկ ակնոց՝ ռենտգենոլոգների համար և այն արտադրութիւն-ներում, վորոնք կապված են կուպրի և ուղիւմի հանքի և նման աշ-խատանքների հետ): Աշխատանքի պայմանների առողջացումն անե-լինյան և թթվուտային արտադրութիւններում հանդիսանում են զո-րեղ միջոցներ, վորոնց հետևանքով խոտորեն պակասել է քաղցկեղով հիվանդանալն այդ ձեռնարկութիւններում:

Բացի արտադրութեան մեջ աշխատանքի պահպանութեան ուսցիտ-նալ կազմակերպումից և պրոֆեսիոնալ ֆլասակարութիւնների վե-րացումից, քաղցկեղից նախազգուշանալու և վաղ ախտորոշման գոր-ծում մեծ գեր կարող է խաղալ նաև ազգաբնակչութեան սանիտարա-կան լուսավորութիւնը: Յուրաքանչյուր մարդ պետք է գիտնա և լավ հիշի, վոր վորևե ուռուցքի սկզբնական նշաններ յերևալու դեպքում անհրաժեշտ է բժշկի դիմել:

Քաղցկեղային հիվանդութեան կանխման գործում մեծ դեր են խաղում նաև խրոնիկական բորբոքային պրոցեսների՝ տուբերկուլյոզի, բիֆիլիոի ժամանակին և ճիշտ բուժումը, ինչպես և վերևում ցույց տված նախաքաղցկեղային հիվանդութիւնների բուժումը:

Ստորին շրթունքի, լեզվի, բերանի խոռոչի քաղցկեղի զարգա-ցումը կանխելու համար, բացի ծխելը դադարեցնելուց, անհրաժեշտ է նաև բերանի խոռոչի ուշադիր խնամք, փչացած ատամների բուժում և հարմար ատամնապրոտեզների (արհեստական ատամներ) ընտրութիւնը:

Ստամոքս-աղիքային տրակտի քաղցկեղի առաջացումը կան-խելու համար անհրաժեշտ է վոչ միայն հրաժարվել ալկոհոլից, այ

խնամքով ծամել կերակուրը, ընդունել այն վոչ ախտաբան տաք (այր-վածքներից խուսափելու համար) և չգործածել մեծ քանակութեամբ համեմիչ նյութեր ու կծու կերակուրներ:

Հաստ աղիքի քաղցկեղի զարգացումը կանխելու համար հարկա-վոր է խուսափել փորկապութիւնից, ուշադրութեամբ հետևել իրեն և բուժել ստամոքս-աղիքային տրակտի բոլոր հիվանդութիւնները, այդ թվում և գեմարոյը, վոր շատերը համարում են անփաս բան:

Կնոջ սեռական որդանների քաղցկեղի զարգացումը կանխելու համար անհրաժեշտ է պահպանել առողջապահական կանոնները՝ հղիութե-թեան և ծննդաբերութեան շրջանում, համառորեն և խնամքով բուժել խոցերը, ձաքվածքները և արգանդի պոլիպները:

Կրծքագեղձի քաղցկեղից նախազգուշանալու համար հարկավոր է կերակրելու ժամանակ պահպանել անհրաժեշտ առողջապահական կանոններ և խուսափել ֆլասակարութեան:

Մաշկի քաղցկեղի զարգացումը կանխելու համար անհրաժեշտ է պահպանել մաշկի առողջապահութիւնը: Հաճախ լվանալ մաշկը, իսկ ֆլասակար արտադրութիւններում աշխատելիս գործածել պաշտպա-նութեան անհրաժեշտ միջոցներ, վորոնք գահմանված են մեղ մոտ աշխատանքի պաշտպանութեան որոնքներով: Յուրաքանչյուր խոցի, ուռուցքի և հիվանդութեան այլ նշանների հայտնվելու դեպքում ան-միջապէս դիմել բժշկի:

ԲԱՆՑԿԵՂԻ ՎԱՂ ԱՆՏՈՂՈՇՄԱՆ ՅԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շնորհիվ վաղ ախտորոշման և հիվանդութեան վաղ շրջաննե-րում բուժելու, կրծքագեղձի քաղցկեղի կայուն առողջացում ստացվում է 60—80 տոկոսով, արգանդային պարանոցի քաղցկեղի առողջացում՝ 70—80 տոկոսով, ստորին շրթունքի և մաշկի քաղցկեղի առողջացում՝ 90—95 տոկոսով և այլն: Ուշացրած և անուշադրութեան մատնած դեպքերում կայուն բուժման տոկոսը խիստ նվազում է. այդպիսի դեպ-քերում արգանդի և կրծքագեղձի քաղցկեղի կայուն բուժման տոկոսը 10—15-ից ավելի չի լինում:

Քաղցկեղի դեպքերի մեծ մասը վաղ շրջաններում բուժելի յեն: Իրա համար էլ հակաքաղցկեղային պայքարի ծանրութեան կենտ-րոնը պետք է կազմեն այդ հիվանդութեան կանխումը, վաղ ախտո-րոշումը և վաղ բուժումը:

ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Քաղցկեղի բուժումը մեծ մասամբ կատարվում է խառը (կամ-բինացված) ձևով, այսինքն՝ վերահատական միջամտության և ճանապարհային բուժման զուգորդմամբ, վորպեսզի վերահատումից հետո մնացած քաղցկեղային բջիջներն ու հևուու տեղափոխումները լիկվիդացիայի յենթարկվեն:

Որգանիզմի ընդհանուր ամրացման և նրա պաշտպանողական ուժերի բարձրացման, ինչպես և վերահատումից հետո արյուն կարգ-նելու դեմ պայքարելու համար լայնորեն կիրառվում է արյան ներարկումը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱԿԱՔԱՂՑԿԵՂԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղցկեղային հիվանդությունների բուժման և կանխման գործում շատ մեծ նշանակություն ունի ԽՍՀՄ-ում հակաքաղցկեղային կայանների, ինստիտուտների, ստացիոնարների ցանցի կազմակերպումը: Բոլոր մարզային, յերկրամասային, հանրապետական կենտրոններում և խոշոր արդյունաբերական քաղաքներում հիվանդանոցներին և պոլիկլինիկաներին կից կազմակերպվում են կայաններ՝ ուսուցիչները բուժելու համար, այսպես կոչված՝ ուսուցիչային (ոնկոլոգիական) կայաններ և ստացիոնարներ, վորոնք պետք է իր ժամանակին և հնարավորին չափ վաղ ախտորոշեն քաղցկեղային ուսուցիչները և հիվանդներին բժշկական ոգնություն ցույց տան:

Մոսկվայում 1935 թվից կազմակերպված է կենտրոնական գիտահետազոտական ոնկոլոգիական ինստիտուտ, վորը հանդիսանում է քաղցկեղ հիվանդության դեմ պայքարի գիտահետազոտական կենտրոն: Լենինգրադում գոյություն ունի Առժողկոմատի և Լենինգրադի քաղաքային առքաժնի կենտրոնական ոնկոլոգիական ինստիտուտ:

Մոսկվայի կենտրոնական ոնկոլոգիական ինստիտուտն արդեն ունի իր բաժանմունքները խոշոր յերկրամասային կենտրոններում (Դոնի Ռոստովում, Վորոնեժում, Սվերդլովսկում, Տոմսկում) և ուրիշ քաղաքներում: Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքն առաջին հերթին ուղղված է քաղցկեղի վաղ ախտորոշման յեղանակների մշակման հարցերին՝ հիվանդությունների կանխման և նրանց բուժման մեթոդները ճանապարհով: Բացի դրանից, ինստիտուտը խոշոր աշխատանք է կատարում ոնկոլոգ (ուսուցիչ) մասնագետ) բժիշկների վորակյալ կադրեր պատրաստելու գործում՝ տեղերի, ինստիտուտների բաժանմունքներում աշխատելու համար:

Մոսկվայում քաղցկեղային հիվանդության վաղ ախտորոշման

աշխատանքը կատարում է ինստիտուտը՝ հենվելով շրջանային ոնկոլոգիական կայանների ցանցի վրա, վորոնց գլուխ կանգնած են վորակյալ բժիշկներ: Ոնկոլոգիական կայաններ կազմակերպված են խոշոր պոլիկլինիկաներին և բուժարաններին կից: Բոլոր նրանք, վորոնք ունեն քաղցկեղի տեսակետից կասկածելի հիվանդության վորակ նշան, պետք է դիմեն այդ կայաններին և ինստիտուտին:

Այդ հակայական ուշադրությունը, վոր կուսակցությունը և կառավարությունը նվիրում են առողջապահության գործին, յերաշխիք է այն բանի, վոր բժշկական աշխատանքները այդ դժվարին բնագավառում ևս, չարորակ նոսրացումների դեմ պայքարի բնագավառում մենք, շնորհիվ հակաքաղցկեղային կազմակերպությունների ստեղծման և գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքի, կկարողանանք հասնել դժարի հաջողությունների և խստորեն պակօցնել հիվանդացուին ու մահացությունն այդ ծանր հիվանդությունից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	42
Ներածություն	3
Ի՞նչ բան են ուսուցչները, նրանց տեսակներն ու դարդացումը:	7
Ի՞նչ են ավշային անոթներն ու գեղձերը և ինչպես են նրանցով անդամա- վում չարորակ ուսուցչներին բջիջները	7
Արդ անո՞ղ ուսուցչների ազդեցությունը ժարգու առողջության վրա	9
Քաղցկեղը, և վորքան հաճախ են նրանով հիվանդանում	10
Քաղցկեղի նշանները (սիմպտոմները)	10
Քաղցկեղի առաջացման պատճառները	11
Ներքին սեկրետային դեղձերը և նրանց հորմոնները	16
Նախաքաղցկեղային հիվանդություններ	17
Քաղցկեղային ուսուցչների վաղ ախտորոշման նշանակությունը	18
Քաղցկեղը վարակիչ չէ	18
Առանձին որգանների քաղցկեղի համառոտ նկարագրությունը:	19
Քաղցկեղով հիվանդանալը կանխելը	26
Քաղցկեղի վաղ ախտորոշման ու բուժման արդյունքները	27
Քաղցկեղի բուժումը	28
Հանրապետության մեջ հակաքաղցկեղային պայքարի կազմակերպումը	28

<< Ազգային գրադարան



NL0270540

ԳԻՆԸ 55 ԿՈՊ.

297

5086

Проф. Я. М. БРУСКИН
РАК
И БОРЬБА С НИМ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.